

## ՄԱՏԵՆԱԹՕՍՈՒԹԻՒՆ

10)՝ ՄՈՒՐԱՅԱՆ. Ռուզան կտմ Հայրենասէր օրիորդ պատմական  
դրամա 5 արարուածով: «Թատրոն» ժողովածու, 1900թ. № 1.

Հայ պատմական պիէսների բախտը, կամ, աւելի ճիշտն ասած, գժբախտութիւնը յայտնի է ամենքին: Այժմ ամենքը զիտեն, թէ այդ շնծու, արուեստական գրուածքները արժանի չեն բեմ հանուելու: Մի անսակ բացառութիւն է կազմում «Ռուզանը»: Մօտ քսան տարի է, ինչ այդ գրաման մտել է հայոց թատրոնական բեպերտուարի մէջ և այժմ էլ յաձախ լուսմ ենք, որ նա ներկայացնուում է զանազան տեղերում: Այս երկարակեցութիւնը, ըստ երևոյթին, պէտք է որ իր հիմնաւոր պատճառներն ունենայ: Պ. Մուրայանը նոր միայն տպագրեց իր այդ հեղինակութիւնը, և այժմ կարելի է քննել նրան իրրեւ գրական երկ:

Պատմական վէպ, գրամա զրելու համար ամենից առաջ հարկաւոր է, որ հեղինակը ձեռքի տակ ունենայ առատ, լաւ ուսումնասիրուած նիւթ: Իրական, ժամանակակից կեանքից որ և է պատկեր վերցնելիս մենք զիտում ենք մեզ հետաքրքրող երևոյթները, դէմքերը, աշխատում ենք բնական, կեանքին համապատասխանող գոյներով նկարել պատկերը: Գործը շատ գժուարանում է, երբ մենք վերցնուում ենք վաղուց անցած-զնացածը, պատմական կեանքը: Այստեղ արդէն մեր առջև չը կան խօսուն, շարժուող մարդիկ: այստեղ կենզանի, արիւն ու մարմին առած դօկումենտներ չը կան: Անցեալի մարդկանց ուսումնասիրելու, նրանց իրական պատկերը փոքր ի շատէ բնական գոյներով նկարելու համար մենք ձեռքի տակ ունենք միայն հատու կտոր տեղեկութիւններ թղթի վրայ, ունենք մեր աշքի առջև հին կեանքի թողած խղճուկ հետքերը—օրինակ, մի կանգուն եկեղեցի, մի բերդի հազիւ նկատելի հետքերը կամ մի որ և է իշխանական ապարանքի պատերից մնացած բեկորները: Պէտք է ահազին ջանք, երկար տարիների ուսումնասիրութիւն՝ այդ

թղթի կտորներին, աւերակներին մի գեղարուեստական գրուածքի մէջ շունչ և կենդանութիւն հաղորդելու համար։ Առանց այսպիսի նախապատրաստութեան չէ կարող ստեղծուել որ և է պատմական երկ, որովհետեւ իւրաքանչիւր պատմական գրուածքի մէջ ամենից առաջ և ամենից շատ պէտք է լինի պատմական ձևարարութիւն։ Զը կայ այդ ճշմարտութիւնը—և պատմական երկը կը ներկայացնէ մի ողորմելի կեղծիք, որ սարգւում է ճիշտ այնպէս, ինչպէս մեր ժամանակներում հնավաճառները կեղծում են կին դրամներ և ծախում որպէս իսկական, անաղարտ հնութիւն։

Նիւթի ընտրութեան կողմից պ. Մուրացանը մի շատ կեղծ դրութեան մէջ է եղել։ Նա կամեցել է ոգեսրութիւն որոնել այնպիսի տեղ, ուր ոչ մի ոգևորիչ հանդամանք չը կայ, գոնէ դրամայի ամենազլխաւոր իդէալի, այսինքն հայրենասիրութեան ակսակէտից։

«Ծուլզանի» նիւթը վերցրած է թաթարական արշաւանքների ժամանակից։ Գործողութիւնը կատարւում է Արցափի Խաչին գաւառում։ Զալալ իշխանը քաջերից քաջ է, կուռում է թաթարների դէմ։ Նրա փեսան, Ներսէհ իշխանը, հէնց հանդիսականների աչքի առջն է վերադառնում թաթարների դէմ սկըսած մի յաղթական արշաւանքից։ Ծուլզանը այդ Ներսէհի նշանածն է։ Բայց Սիւնեաց Համտուն իշխանն էլ աչք ունի նրա վրայ. և երբ Ծուլզանը մերժում է այդ իշխանի կինը դառնալ՝ Համտունը գնում է թաթարների մօտ, մատնում է Զալալին, գովում է Ծուլզանի գեղեցկութիւնը։ Թաթար իշխանաւորներից մէկը, Բուրա, վճռում է, որ Ծուլզանը իրանը պիտի լինի։ Թաթար զօրքը մօտենում է Զալալի բերդին։ Հայերը կոռւել չեն ուզում և խաղաղ բանակցութիւններ են սկսում թաթարների հետ։ Բուրան յայտնում է որ խաղաղութիւն կարող է լինել այն դէպքում, եթէ Զալալը Ծուլզանին իրան տայ։ Պայմանը բերդում չէ ընդունւում։ Հայ իշխանները պատրաստում են պատերազմի։ Բայց Ծուլզանը այլ կերպ է վճռում. շրջակայ գիւղերից թաթարները հաւաքել են հազար հայեր, որոնց պիտի կոտորեն, հէնց որ Զալալի մերժումը յայտնի կը դառնայ թաթարական բանակում։ Եւ Ծուլզանը, այդ խեղծերին ապրեցնելու համար, փախչում է բերդից, գնում է Բուրայի մօտ և նրա կինը դառնալու համաձայնութիւն է տալիս։ Նա իր հետ տանում է թոյն, որպէս զի, նախ քան թաթար իշխանի գիրկը մտնելը, վերջ դնէ իր կենաքին։

Այսպէս է պատմում պ. Մուրացանը։ Նրա ասելով, Խաչինի իշխանի բերդում վառ են հայրենասիրութիւնը, անվախ քաջա-

սրտութիւնը և հերոսական անձնազո՞ռութիւնը բարձր գաղափարի համար: Տեսնենք ո՞քան ճշտութիւն կայ պ. Մուրացանի այս պատմութեան մէջ:

Դրամայի մէջ գործող անձինքներից պատմական են միայն չորսը—ինքը, Հասան Զալալ Դոլան, Նրա կին Մամբանը, եղբայր Զաքարէն և Ռուզանը (իսկապէս Ռուզուքան և ոչ Ռուզան): Այդ մարդկանց մասին խօսում են երկու ժամանակակից պատմագիրներ. Վարդան (շատ համառօտ) և Կիրակոս (մանրամասն): Ի՞նչ են ասում սրանք:

Զալալ իշխանը հոչակառոր Զաքարէ և իւանէ սպասարարների քրոջ որդին է, Ներքին Խաչէնի տէր Սակուեանց Վախութանգի որդին. ունի մեծ կալուածքներ, մի աւատական իշխող է, հարուստ ու փառաւոր. պատմագիրները տալիս են նրան «մեծ իշխան», «արքայաշուք» անունները. իսկ Գանձասարի վանքի արձանագրութիւնը անուանում է նրան «ինքնակալ», նոյն իսկ «թագավաւոր»:

Այս բոլորը շատ լաւ: Բայց ահա թափւում են թաթարները, գժրախտ Խաչէնը արիւնլուայ է դառնում: Գանձասարի գիմաց, ամպերի մէջ կորած մի սար կայ, և այդ սարի զիսին էր Զալալի բերդը: Երկիրը լի է այդպիսի բնական ամրութիւններով, որոնք պաշտպանելու հիմնալի միջոցներ են տալիս: Բայց ոչ մի տեղ չենք տեսնում Զալալին թաթարների դէմ կոռւելիս, որ և է քաջութիւն ցոյց տալիս ձիշտ է, սկզբում Զալալը փակւում է իր բերդում, բայց պատերազմ տեղի չէ ունենում. Զալալը առանց մի նիզակ կոտրելու հպատակում է թաթարներին, յանձն է առնում հարկ տալ նրանց և օգնել նրանց իր զօրքերով: Եւ դա բնական է. Զալալը հոչակուած է իր բարեպաշտութեամբ, բայց ոչ քաջութեամբ: Կիրակոս պատմագիրը բառ չէ թողնում Զալալին փառաբանելու համար: «Բարեպաշտ և աստուածաէր մարդ, հեղ և հանդարտ, ողորմած և աղքատասէր, աղօթքների և ինդդրուածքների մէջ ճգնող, նման նրանց, որոնք անսպասներում են լինում: Ցերենկուայ և գիշերուայ պաշտօնը կատարում էր անխափան, ուր և լինէր, ինչպէս վանքերում, և Փրկչի յարութեան յիշատակը կատարում էր կիրակի օրերը, ոտքի վրայ կանգնած՝ անքուն անց էր կացնում աքնութեամբ. շատ քահանայասէր էր և ուսումնասէր, աստուածային կտակարանների ընթերցող էր \*): Ուրիշ հանգամանկների մէջ էլ կղերական պատմագիրը գովում է իշխանին, և միշտ ամեն տեղ Զալալը հոգի պաշտող մի արդար քրիստոնեայ է և

\*) Կիրակոս պատմ., Վենետիկ. Եր. 145:

ուրիշ ոչինչ. դուք չեք գտնի մի բառ, որ վկայութիւն լինէր այն մասին, թէ Զալալը պատերազմող է, անվեհեր զինուոր, յաղթող բազուկի տէր:

Այդ բարեպաշտ մարդը, համաձայն ենք, իր բոլոր հարըստութիւնները դրել էր բարի գործերի համար, ոչինչ չեր խնայում, որ տիրողների հետ հաշտ ու խաղաղ ապրէ: Նա նոյն իսկ բաւական աջողութիւն ունէր իր այդ քաղաքականութեան մէջ. որքան հնարաւոր էր՝ նա չէր թոյլ տալիս, որ թաթարները կեղեքն ժաղովուրդը, թոյլ չէր տալիս ոչ թէ զէնքի ոյժով, այլ իր վրայ վերցնելով հարկերի և տուրքերի ծանրութիւնը. նա իրանից էր տալիս այն ամենը, ինչ պահանջում էին թաթարները ժողովրդից: Բայց բարեպաշտ խաղաղասիրութեան ժամանակներ չէին. ըստ նայած իշխանի նոյն իսկ չափազանց հեղութեան և կամակատարութեան, թաթարները մի անգամ անսպէս քանոդեցին ու կործանեցին Խաչէնի բերդերը, որ նոյն իսկ չէր կարելի իմանալ, թէ այդտեղ երբ և իցէ բնակութիւն եղել է: Պատմութիւնը չէ ցոյց տալիս, որ այդ աւերանքի ժամանակ որ և է դիմագրութիւն եղած լինի հայերի կողմից: Ուրեմն, Զալալը մեծագործ է լոկ իրու բարեպաշտ քրիստոնեայ: Եւ իրաւ. բռնութեան և արտասունքների տարիներում նա շինում է Գանձասարի հոյակապ վանքը. օծման հրաւիրուած են 700 քահանաներ, և Զալալը ճաշի վրայ սպասաւորում է նրանց:

Մենակ՝ նա չէր այդքան կրօնասէր, նոյն իսկ կրօնամոլ: Նրա մայր Խորիշանը ծախում է իր ճողոր ունեցածը, բաժանում աղքաններին և գնում է Երուսաղէմ, ուր ճգնուում է մինչեւ կեանքի վերջը, ապրելով իր ձեռքի աշխատանքով: Ճգնող էր, ինչպէս վկայում է Կիրակոսը, նաև Զալալի կին Մամքանը: Իսկ Զալալի որդի և ժառանգ Աթաբէկը «արքանունդ», պարկեշտ, խոնարհամիտ և աղօթական մարդ էր, ինչպէս մէկը սուրբ միացնակեցներից. որովհետև նրա ծնողները այնպէս էին դաստիարակել նրան»: ասում է նոյն կիրակոսը:

Ճգնաւորների մի ամբողջ ընտանիքը: Նա կարող է նիւթ տալ մի հոգեսոր ներբողի, մի մարտիրոսագրութեան համար (մանաւանդ որ Զալալը իր կեանքը վերջացրեց նահատակութեամբ, և նրա մարմնի վրայ, ինչպէս ասում են կրօնաւորները, երկնքից լոյս էլ է իջել), բայց ոչ թէ այնպիսի գաղափարների համար, որոնք մոցրած են «Խուզան» դրամայի մէջ: Քաջ զօրավարները, յաղթող և անձնուէր հայրենասէրները այդտեղ գործ չունեն. չէ կարելի զօռով մարդկանց վզին փաթաթել այն, ինչ նրանք չեն ունեցել:

Բայց դրամայի գլխաւոր հիմքը այն վայրկեանն է, եր Ռուզանը, իբրև անձնազո՞ր, հայրենիքի բախտին նուրիրուած մ հերոսուհի, գնում է թաթարների բանակը, հակառակ իր ծնող ների կամքին: Այդ կէտը, որ պիէսի հոգին է կազմում, ամբող ջովին շինծու է, հսարած: Այդպիսի Ռուզան գոյութիւն չէ ու նեցել: Զալալի աղջկայ մասին Կիրակոս պատմագիրը միայն մ տեղ է յիշում, երբ նկարագրում է, թէ ինչպէս սպանեցին այ բարեպաշտ, հեզ իշխանին: Թաթար զօրապետներից մէկը, Սր զուն, բռնում է Զալալին և տանջելով տանում է Ղազուին, ու մոտադիր է սպանել տալ նրան: «Իսկ Զալալի դուստր Ռուզանը, որ Բարանուինի կինն էր եղել... գնաց Հօլաւուի կի Թօխուզ Խաթունի մօտ, որպէս զի ազատէ իր հօրը Արդուն ձեռքից»: Ե՞րբ է Ռուզուքանը Բուրանուինի կինը դարձել շ գիտենք: Զամշեանը, չը գիտենք, ինչպէս է իմացել, որ այդ ա մուսնութիւնը տեղի է ունեցել 1238 թւին, երբ թաթարներ պաշարել էին Զալալի բերդը և երբ Զալալը խաղաղութեամ հպատակուեց թաթարներին. իբրև թէ այդ խաղաղ դաշնադրու թիւնը հաստատելու համար էր, որ Զալալը իր աղջկան տուե Բուրանուինին:

Ահա Զամշեանի այս խօսքերի վրայ է հիմնել պ. Մուրա ցանը իր դրաման, թէև այդտեղ ոչինչ չը կայ, որ ցոյց տար, թ՛ Ռուզանը մի ինչ որ աղէտի առաջն առնելու համար փախա բերդից և յօժար կամքով իրան յանձնեց թաթար զօրապարին Դնենք, թէ հէնց այգալէս էր, բայց դա ինչ թշուառ հայրենա սիրութիւն է, որ թոյլ է տալիս մի օրիորդի ընկնել երկրը թշնամու գիրկը՝ հայրենիքի ազատութիւն ձեռք բերելու համար Պ. Մուրացանը գիտէ, որ դա կը լինէր մի անհամ ու գատապար տելի հայրենասիրութիւն, ուստի իր հերոսուհու ձեռքը թոյն է տալիս, որպէս զի նա վերջ գնէ իր կեանքին, նախ քան թա թարի կրքերի առարկայ գառնալը: Բայց այստեղ էլ հեղինակին ծաղրում է պատմական ճշմարտութիւնը: Ռուզանը ոչինչ թոյն չէ ունեցել իր հետ: Զամշեանը Ռուզանի ամուսնութիւնը դնում է 1238 թւին: իսկ Զալալը նահատակուել է 1261 թւին: Ես որովհետեւ անհերքելի փաստ է, որ Ռուզանը Ղազուինում աշ խատում էր ազատել իր հօրը, ուստի դուրս է գալիս որ Ռու զանը ամբողջ 23 տարի կին էր թաթարների մէջ, ամենեին չը մտածելով այն թոյնի մասին, որ պ. Մուրացանը դրել է նրա ձեռքում...

Այսպէս ահա, ուր որ նայում էք՝ տեսմում էք միայն կեզծ ու շինծու դրութիւններ: «Ռուզան» դրաման չունի իր մէջ ոչինչ պատմական ճշմարտութիւն: Չունենալով ոտի տակ հաստատուն հող,

չունենալով իր շուրջը ոգեսրող փաստեր, պ. Մուրացանը թխել է իր երեկայութեան միջոցով մի հայրենասիրական պատմուածք, ամեններն հոդ չը տանելով իր գոված ու փառաբանած հերոսների մասին։ Կեղծ դրութիւններ դրամայի մէջ—որքան կամենապք։ Հէնց նայեցէք այն տեսարանին, որ ներկայացնում է այն րոպէն, երբ Զալալի պալատում ստացւում է Բուրայի առաջարկութիւնը՝ Ռուզանին իրան տալու մասին։ Վճռում են պատերազմ սկսել. Զալալը չէ ուզում իր աղջկան թաթարի կին դարձնել. չէ ուզում այդ բանը մանաւանդ Ներսէն իշխանը, որ Ռուզանի նշանածն է, որ քաջ է, յաղթել է թաթարներին և Բուրայի առաջարկութիւնը լուռմ է հէնց այն միջոցին, երբ հարսանիքն է, երբ պիտի Ռուզանի հետ եկեղեցի գնայ։ Ամենաքը արտասանում են հայրենասիրական թունդ խօսքեր, ամենաքը քաջեր են. բայց հէնց որ լսում են, թէ Ռուզանը փախել, գընացել է թաթարական բանակը՝ լուռմ են, հանդարտուում. և բեմի վրայ մնում են փայտէ սրերի շոշողուն ու դատարկ խօսքեր, որնք շատ ողորմելի կերպարանք են տալիս այդ «քաջերին»։ Ահա մի նմուշ այդ թշուառ ֆրազներից։

**Ներսէն.** Եթէ դժոխքի կատաղիներն անդամ զինուեն իմ դէմ, ես չի պիտի լաղթահարուում։ Այս կործքի մէջ, որ բարախում է մի սիրո քեզ սիրելու համար, սնանում է և մի առիւծ՝ քեզ պաշտպանելու համար։ Քանի գեռ շնչում եմ, քանի գեռ արին է վազում իմ երակներում և քանի այս բազուկը կորովի է, ես թոյլ չեմ տալ, որ բռնաւորի պլոդ ձեռքի մօտենան քեզ, նայց երբ ես անկարող կը լինեմ քո անիբան ճակատագիրը շնջելու. երբ ես իմ քաջերով կը լինեմ պատերազմի դաշտում, այն ժամանակ, Ռուզան, ազդի փրկութեան սեղանի վրայ դու կը հանես քո ողջակէզը. Ուրեմն գեռ ակժմ մենք կ'երթանք գործելու.

Բառեր, բառեր, բառեր...

Իսկ երբ յայտնի է դասում Ռուզանի փախչելը՝ Զալալը ասում է թիկնապահներին.

«Բացէք բերդի գուռը. շատապէցէք նրա առաջն առնելու (թիկնապահները գուրս են վազում)։ Իսկ մենք, բարեկամներ, յետաձգնք առ այժմ մեր յարձակումը, մինչև որ տեսնենք Աստուած ինչ է լաջողում։

Եւ Ռուզանին արգելելու համար՝ պաշարուած բերդից դուրս են գալիս գիտէք ովքեր. — Երկու աղախին, մի ծառայ։ Փառաւորներից փառաւոր Ներսէն իշխանը, Զալալ իշխանը և ուրիշներ հանդիսան նստում են իրանց տեղը, սպասելով որ աղախիններն ու ծառաները յետ դարձնեն Ռուզանին։ Երեկից քաշութիւն...

Երկար կը լինէր այս «պատմական» դրամայի անհեթե՛ թութիւնները մի առ մի բերելը։ Նոյն իսկ եթէ վերցնենք

«Մուզանը» ոչ իբրև պատմական գրուածք, այլ լոկ իբրև երեակայութեան մի պտուղ, կը տեսնենք դարձեալ շատ պակասութիւններ: Բոլոր գործող անձինքները միանման են. չը կան դէմքեր, չը կան բնաւորութիւններ. թաթարը, մատնիչ հայը, հերոսը, սիրահարը, նոյն իսկ ծառաները խօսում են միատեսակ լեզուով. դա հարուսա ու ողորկ է իբրև հայերէնի նմուշ, բայց անկենդան, շնծու է իբրև կենդանի մարդկանց խօսք: Պ. Մուրացանը գտնուում է Պէշիկթաշւեանի, Հէքիմնանի, Նարբէյի խիստ աղդեցութեան տակ: Անդադար լսում էք «կամակոր հայ», «հեռու այդ պիղծ ձեռքերով», «գարճէք սրերդ իրանց պատեանները», «վատարանց», «Տէր-Նուին», (թաթարական իշխանի անունը) «քաշիր լեզուդ, գարշելի պառաւ, ապա թէ ոչ սուրս կը լսեցնէ նրան» և այլ այսպիսի բառեր ու բացազանչութիւններ, որոնք սաստիկ յեշեցնում են մեր հանգուցեալ պատմական տրագեդիաները: Աւելացրէք դրա վրայ և հեղինակի սաստիկ գրաբարամոլութիւնը (գործ է ածում «զի», «կարի», «առ քեզ»), և պատկերը լրացած կը լինի:

Բայց «Մուզանից» կարելի էր մի փոքրիկ, ոչ-պատմական գործ շնել: Պ. Մուրացանը լւաւ սիւժէտ է վերցրել, բայց չէ կարողացել նրան մշակել: Մի օրիորդի անձնազնութիւն հայրենիքի ազատութեան համար—սա թէս շատ հին, քաշքած նիւթէ, բայց ունի իր թարմութիւնը և միշտ սիրելի ու հաճելի կը մնայ: Թո՞ղ այդ օրիորդը անպատճառ Զալալ իշխանի աղջիկը չը լինի, թո՞ղ նա լինի նոյն իսկ ոչ պատմական անձնաւորութիւն, այլ երևակայութեան ծնունդ—ոչինչ վկաս չը կայ դրանից: Ընթերցողի վրայ տպաւորութիւն թողնում է Մուզանը այն ժամանակից, երբ նա վճռում է զոհուել հայրենիքի համար. նրա փախչելը բերդից, նրա ճանապարհը մինչև թշնամու բանակը, խօսակցութիւնը թաթար իշխանի հետ լաւ են, տպաւորիչ: Հէնց այս կտորներն էլ պիէսի աջողութեան գաղտնիքն են կազմում:

Բայց այդ կտորներից գուրս ուշադրութեան արժանի ոչինչ չը կայ: Եթէ դէն գցուեն շնծու շատախօսութիւնները, թղթից ու փայտից շնած քաջերը, կեղծ դրութիւնները, տրագիքական անհամ բացականչութիւնները, որոնք միայն ծիծաղ են յարուցանում, մի խօսքով՝ եթէ ամբողջ պիէսը մի լաւ, հիմնաւոր կրծատման ենթարկուէր և մնար միայն պաշարուած բերդից գուրս եկող աղջիկը, որ գնում է իրան զանելու—այն ժամանակ «Մուզանը» կը լինէր մի կամ երկու արարուածից բաղկացած դրամա, որին նայելը հաճելի կը լինէր:

Իսկ ներկայ դրութեան մէջ նա անհեթեթութիւն է թէ

պատմական ճշմարտութեան և թէ մի գեղարուեստական երկից  
պահանջուող յատկութիւնների տեսակէտից:

1.

**11) ՎԻՆՕԳՐԱԴՈՎ.** Պասազիրք բնվանուր պատմութեան, մասն  
III. Նոր Գար, բարգմանեց և Հայոց պատմութեան յաւելուածով  
ձևացրեց Ն. Քարամեան. Երա. Առաքել Մատուրեանի. Բագու,  
1900. 8<sup>o</sup>. 379. գինը 1 ռուբի:

Երեխ պ. Քարամեանը իր այս թարգմանութեամբ միայն  
ցանկութիւն է ունեցել ապացուցանելու, թէ մեր աշխարհաւ-  
րարը գեռ այնպիսի ողորմելի վիճակի մէջ է, որ չէ կարող  
ճիշտ արտայայտել վիրացական գաղափարներն ու պարզ նկա-  
րագրել պատմական իրողութիւնները: Ուրիշ կերպ չեմ կարող  
բացարել, թէ ինչն է ստիպել այդ «հայագիտութեան սինին»  
տալ մի այսպիսի աշխատութիւն, որի ամեն մի էջը անընդհատ,  
բայց ապարդիւն ճիգ է լեզուի գժուարութիւնների դէմ մաքա-  
ռելու, մինչեւ որ վերջապէս, պարոնը այն աստիճան իւճճում է,  
որ հայերէնի փոխարէն սկսում է թոթովիկ Յաբելոննեան աշ-  
տարակաշինութեան լեզուով:

Մուկուայի համալսարանի պրօֆէսօր Վինօգրադօվը, մի  
լուրջ գիտնական, 1895 թ. հրատարակել է մի դասագիրք, որի  
երրորդ մասի թարգմանութիւնը տալիս է այժմ պ. Քարամեանը  
մեր միջնակարգ գպրոցների աշակերտների համար, «անձամբ  
փորձած լինելով թելագրութեամբ տաժանելի դասաւանդու-  
թիւնը և սիրայօժար հրճուանօք փութալով կատարել Նորին  
Վեհափառութեան հրամանը մի դասագիրք պատրաստելու պատ-  
մութեան համար»:

Մուսերէն բնագիրը կարծ ժամանակամիջոցում երեք հը-  
րատարակութիւն է ունեցել, և եթէ մամուլն էլ, մանկավար-  
ժական աշխարհն էլ համակրութեամբ էին ողջունում նրա երե-  
ւան գալը, պատճառն այն էր, որ հեղինակը, հետեւելով այժ-  
ման պատմական գիտութեան պահանջներին, իր ձեռնարկի  
մէջ առաջին տեղն է յատկացրել ժողովուրդների ներքին կեան-  
քի, այսինքն—կրօնական, մտաւոր, հասարակական ու տնտե-  
սական յարաբերութիւնների զարգացման պատկերին, իսկ թա-  
գաւորական աների ու ազգերի անվերջ խռովութիւնների ու  
կոիւների մասին այնքան է խօսում, որքան անհրաժեշտ է քա-  
ղաքակիրթ մարդկութեան առաջընթացութեան մասին ամփոփ  
գաղափար տալու համար: Մասնաւորապէս Վինօգրադօվի՝  
«Նոր Դար» հատորի այն ասկասկած առաւելութիւնն էին չեշ-